

ՀԱՅ ՉՄԵՌ ՊԱՊ
բարեգործական
հիմնադրամ



**HYE SANTA
Charitable
Foundation**

08.03.2010

«Մեր հայրենի գավակներ» կազմակերպության մեծարգո՝ անդամներ

Օրերս ստացանք ձեր ուղարկած հերթական բեռը՝ 3 արկղ:

«Հայ Չմեռ պապ» հիմնադրամի ներկայացրած ընտանիքների համար նախատեսված ձեր նվերներն օվկիանոսից անդին մեկնարկած իրենց ճանապարհը շարունակում են նաև Հայաստանում. Երևանի թիվ 16 գրադարանի աշխատակիցների օգնությամբ դրանք առաջին հերթին տեսակավորվում և վերադասավորվում են ըստ կոնկրետ ընտանիքների անդամների սեռի և տարիքի: (Այս գործում տարիների շնորհակալ դեր է ստանձնել գրադարանի վարիչ Գայանե Միրիբյանը՝ «Հայ Չմեռ պապ»-ի վաղեմի օգնականն ու խորհրդատուն):

Այնուհետև ձեր կողմից խնամքով ու սիրով պատրաստված նվերները գտնում են իրենց հասցեատերերին: Շատ եմ ավստում, որ առիթ չեք ունեցել տեսնելու այն երեխաների հրճվանքը, որոնք հագուստ, կոշիկ կամ գրենական պիտույքներ չունենալու պատճառով երբեմն նույնիսկ դադարում են դպրոց հաճախել: Մեր շահառու երկու ընտանիքի հասունացած օրիորդները կարողացան ձեր առատ ընծաներից պատշաճ օժիտ հավաքել իրենց համար:

Բոլոր այս մարդկանց անունից խորին շնորհակալություն ձեզ, գաղափարակի՛ց բարեկամներ: Ուղարկում եմ մի քանի լուսանկար և նամակներ: Կարծում եմ, որ պարզ ոճով շարադրված այս շնորհակալագրերը կկարողանան ձեզ հասցնել հասարակության ուշադրության շրջանակներից դուրս հայտնված մարդկանց ջերմությունը:

Ընդունեք նաև «Հայ Չմեռ պապ» հիմնադրամի երախտիքի խոսքը: Մեզ համար կարևոր արժեքներ են հիմնադրամի աշխատանքի վերաբերյալ ձեր մշտական արձագանքները: Հուսով եմ, որ համատեղ ջանքերով կկարողանանք գոնե մասամբ թեթևացնել Հայաստանում և ԼՂՀ-ում բնակվող սոցիալապես անապահով գոնե մի քանի ընտանիքի հոգսերը: Չե՞ որ բարեգործությունը առաքինություն չէ, այն յուրաքանչյուրիս պարտականությունն է:

Հատուկ շնորհակալություն պարոն Վարուժ Կյուրեղյանին: Մենք նրան ենք պարտական «Մեր հայրենի գավակներ» կազմակերպության հետ «Հայ Չմեռ պապ» հիմնադրամի բարեկամության համար:

Հետագա համագործակցության ակնկալիքով՝

Արմինե Պետրոսյան

«Հայ Չմեռ պապ» բարեգործական հիմնադրամի տնօրեն

Mob: (+374 93) 31 79 13

